



Grant Thornton

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

2015թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Մեր կողմից իրականացվել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը

մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Առողջադրական աշխատանքները ներառում են մաս կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես մաս ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան առողջադրական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևավորման հիմքեր

Ինչպես նկարագրված է ծանոթագրություններ 1-ում և 4-ում, 2010թ. Ընկերությունը սկսել է մոր էներգակայանի շահագործումը, այդպիսով դադարեցնելով գոյություն ունեցող էներգաբլոկի ակտիվ շահագործումը, որի հաշվեկշռային արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ին կազմել է 13,994,297 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ին՝ 18,707,446 հազար դրամ): Վերջինս հանվել է ակտիվ շահագործումից և պահվել է որպես պահուստային հզորություն: Այս փաստը, ծանոթագրություն 4-ում նկարագրված այլ գործոնների հետ մեկտեղ, մատնանշում է, որ մախկին էներգակայանում ներառված ակտիվները կարող են արժեզրկված լինել: Ընկերությանը չի հաջողվել որոշել վերոնշյալ ակտիվների փոխհատուցվող գումարը, ինչպես պահանջվում է ՀՀՄ 36. «Ակտիվների արժեզրկում» ստանդարտով: Մենք չկարողացանք որոշել վերոնշյալ հարցի հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ձևավորված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ նախորդ պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցությունից, ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և մույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Այլ հանգամանքներ

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները առողիտ են արվել այլ առողիտորի կողմից: Վերջինս 2015թ. հունիսի 1-ին արտահայտել է դրական եզրակացություն այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

2016թ. հունիսի 29



Գրանթ Թորնթոն Առողիտ ՍՊԸ

Բուխարեստ, Ռումինիա

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա- յացված)	2014թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկա- յացված)
	Ծանոթ.			
Ակտիվներ				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	127,707,236	135,797,953	134,437,375
Ոչ նյութական ակտիվներ		2,088	2,520	4,816
Հետաձգված հարկային ակտիվներ	5	2,351,005	382,987	-
Շահութահարկի գծով նվազագույն վճարներ		-	-	239,772
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	6	8,388,166	5,763,624	5,590,493
		<u>138,448,495</u>	<u>141,947,084</u>	<u>140,272,456</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	7	5,773,106	5,801,801	5,050,890
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	24,658,613	14,531,947	8,766,870
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	3,099,856	804,192	290,750
		<u>33,531,575</u>	<u>21,137,940</u>	<u>14,108,510</u>
Ընդամենը ակտիվներ		<u><u>171,980,070</u></u>	<u><u>163,085,024</u></u>	<u><u>154,380,966</u></u>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա- յացված)	2014թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկա- յացված)
	Ծանոթ.			
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
<i>Կապիտալ և պահուստներ</i>	10			
Բաժնետիրական կապիտալ		11,459,612	743,717	743,717
Վերագնահատման պահուստ		11,687,193	15,703,534	19,725,712
Կուտակված վնաս		(12,478,499)	(11,123,076)	(12,741,693)
		10,668,306	5,324,175	7,727,736
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	11	99,299,676	103,934,804	120,364,884
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	38,174	39,181	40,187
Հետաձգված հարկային պարտավորություններ	5	-	-	1,475,499
		99,337,850	103,973,985	121,880,570
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	11	13,919,624	23,582,258	3,522,683
Եկամուտներին վերաբերող շնորհներ	13	435,315	439,746	453,247
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	46,941,367	29,657,426	20,796,730
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		677,608	107,434	-
		61,973,914	53,786,864	24,772,660
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		171,980,070	163,085,024	154,380,966

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2016թ. հունիսի 29-ին:



Սեփական կապիտալի
հավանական
գնահատական

[Signature]
Գարրի Ախոյան
Գլխավոր հաշվապահի տեղակալ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների
բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ

		2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
	Ծանոթ.		
Հասույթ	15	68,610,206	64,409,969
Վաճառքի ինքնարժեք	16	(61,907,263)	(60,445,630)
Համախառն շահույթ		6,702,943	3,964,339
Այլ եկամուտ		328,362	366,017
Իրացման ծախսեր		(14,142)	(19,092)
Վարչական ծախսեր	17	(601,500)	(808,016)
Այլ ծախսեր	18	(7,902,625)	(6,009,097)
Գործառնական գործունեությունից վնաս		(1,486,962)	(2,505,849)
Ֆինանսական եկամուտ	19	561,589	521,840
Ֆինանսական ծախսեր	19	(1,608,146)	(1,535,994)
Ֆինանսական ակտիվների արժեզրկում	6	(3,160,116)	(2,893,583)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ	20	(682,082)	2,511,565
Վնաս մինչև հարկերը		(6,375,717)	(3,902,021)
Շահութահարկի գծով փոխհատուցում	21	1,003,953	1,498,460
Տարվա վնաս		(5,371,764)	(2,403,561)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(5,371,764)	(2,403,561)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Վերագնա- հատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	743,717	25,139,445	(430,671)	25,452,491
Նախորդ տարվա սխալների ուղղում	-	(5,413,733)	(12,311,022)	(17,724,755)
Վերաներկայացված մնացորդ (տես՝ ծանոթագրություն 29)	743,717	19,725,712	(12,741,693)	7,727,736
Տարվա վնաս	-	-	(2,403,561)	(2,403,561)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(2,403,561)	(2,403,561)
Վերագնահատման պահուստի օգտագործում	-	(4,022,178)	4,022,178	-
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	743,717	15,703,534	(11,123,076)	5,324,175
Տարվա վնաս	-	-	(5,371,764)	(5,371,764)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(5,371,764)	(5,371,764)
Բաժնետիրական կապիտալի թողարկում	10,715,895	-	-	10,715,895
Գործարքներ սեփականատերերի հետ	10,715,895	-	-	10,715,895
Վերագնահատման պահուստի օգտագործում	-	(4,016,341)	4,016,341	-
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,459,612	11,687,193	(12,478,499)	10,668,306

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	48,593,832	29,662,241
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(29,200,422)	(23,650,868)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(726,334)	(791,280)
Վճարված հարկեր և պարտավորություններ	(4,652,816)	(1,865,183)
Վճարված շահութահարկ	(458,698)	(187,000)
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<i>13,555,562</i>	<i>3,167,910</i>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառությունների տրամադրում	(1,013,990)	(5,400,592)
Տրամադրված փոխառությունների մարում	-	3,584,600
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<i>(1,013,990)</i>	<i>(1,815,992)</i>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	10,270,945	5,341,876
Վարկերի և փոխառությունների մարում	(13,824,904)	(5,359,471)
Վճարված տոկոսներ	(6,607,283)	(710,132)
<i>Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<i>(10,161,242)</i>	<i>(727,727)</i>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	2,380,330	624,191
Փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	(76,786)	(75,139)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(7,880)	(35,610)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	804,192	290,750
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	3,099,856	804,192

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ընկերությունը հիմնադրվել է 1963թ.: «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) ստեղծվել է 1997թ.:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

- էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրություն և վաճառք,
- բնական գազի և էլեկտրաէներգիայի ներմուծում և արտահանում:

Ընկերության գործունեությունը՝ ներառյալ սակագնային քաղաքականությունը, կարգավորում է Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովը:

Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի նախագծման աշխատանքները սկսվել են 1959 թ. Խորհրդային Միության «Տեպլոէլեկտրոպրոյեկտ» ինստիտուտի կողմից: Այն որոշվել է կառուցել Հայաստանի արդյունաբերական էներգատար կենտրոններից մեկում՝ Երևանի հարավային արդյունաբերական հանգույցում: Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի շինարարությունը սկսվել է 1961թ.: Երևանի ՁԷԿ -ի թվով յոթ տուրբոազրեգատներից առաջինը՝ 50 ՄՎտ հզորությամբ առաջին տուրբինային տեղակայանքը շահագործման է հանձնվել 1963թ., իսկ վերջինը՝ 1967թ.:

Շահագործման մեջ լինելով ավելի քան 40 տարի՝ էլեկտրակայանի ազրեգատները և օժանդակ սարքավորումները ենթարկվել են ֆիզիկական և բարոյական էական մաշվածության՝ սպառելով իրենց աշխատանքային նորմատիվային պաշարները, որի հետևանքով բնականաբար զգալիորեն ընկել է կայանի շահագործման հուսալիությունը և էլեկտրական ու ջերմային էներգիայի արտադրության արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և Ընկերության ղեկավարությունը բնական գազի այրմամբ գերժամանակակից համակցված շոգեգազային ցիկլով աշխատող նոր էներգաբլոկի կառուցման միջոցով ձեռնամուխ են եղել Երևանի ՁԷԿ-ի վերակառուցման ծրագրի իրականացմանը: 2005թ. մարտի 29-ին ՀՀ կառավարության և միջազգային համագործակցության ճապոնիայի բանկի (ՄՀՃԲ) միջև ստորագրվել է վարկային պայմանագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Նշված համաձայնագրի հիման վրա ՄՀՃԲ -ն ՀՀ կառավարությանը տրամադրել է վարկ արտոնյալ պայմաններով՝ հատկացնելով 26,409 միլիոն ճապոնական իեն: Համաձայնագիրը վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 2005թ. հուլիսի 27-ին:

Նոր գործարանի շինարարությունը սկսվել է 2006թ. և ավարտվել է 2010թ.: Այն շահագործման է հանձնվել է 2010թ. ապրիլին:

Ներդրվող նոր տեխնոլոգիաների շնորհիվ բարձրացել է կայանի ընդհանուր օգտակար գործողության գործակիցը՝ հասնելով մոտ 70 % -ի, զգալիորեն նվազել է արտանետումների մակարդակը, ինչպես նաև խմելու ջրի ծախսը՝ ավելի քան 3 անգամ:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2015թ. կազմել է 380 մարդ (2014թ.՝ 462 մարդ):

Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, 0053 ք. Երևան, Արին Բերդի փողոց 3-րդ նրբանցք, 3-րդ շենք:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղչված արժեքով և որոշ հիմնական միջոցների, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 22-ում:

2.5 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ընկերությունը հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և նախորդ տարվա սխալների ուղղումը կիրառում է թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում դրանց բացահայտումից հետո հետընթաց՝ վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար: Ֆինանսական հաշվետվությունները, նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը ներառյալ, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը: Ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող ուղղման գումարը ճշգրտվում է ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանում:

2.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2015թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև: Չնայած այս նոր ստանդարտները և փոփոխությունները առաջին անգամ կիրառելի են 2015թ. ընթացքում, դրանք էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2015թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Տարեկան բարեփոխումներ՝ 2010-2012թթ.

2010-2012թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՄ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Ընկերությանը վերաբերող փոփոխությունները ամփոփված են ստորև.

ՖՀՄՄ 13. «Իրական արժեքի չափում»

Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր.

- փոփոխվում են Եզրակացությունների համար հիմքերը՝ պարզաբանելու համար, որ ընկերությունը պարտադրված չէ հաստատված տոկոսադրույք չունեցող կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը գեղչել հաշիվ-ապրանքագրում նշված գումարից ցածր արժեքի, եթե գեղչման ազդեցությունն էական չէ:

ՀՀՍՄ 16. «Հիմնական միջոցներ»

Վերագնահատման մեթոդ - կուտակված մաշվածության համամասնորեն վերաբաշխում.

- քննարկվում է հիմնական միջոցի միավորի համար վերագնահատման մեթոդի կիրառմամբ չափվող կուտակված մաշվածության հաշվարկման եղանակների փաստացի բազմազանությունը,
- պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է այնպիսի եղանակով, որը համադրելի է հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը,
- պարզաբանվում է, որ կուտակված մաշվածությունը հաշվարկվում է որպես համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված արժեզրկումից կորուստները հաշվի առնելուց հետո հաշվարկված հաշվեկշռային արժեքի տարբերություն:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՍՄԽ) կողմից թողարկվել են որոշակի մոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Դեկլարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն մոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ մոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

ՖՀՍՄ 9 «Ֆինանսական գործիքներ» (2014թ.)

ՀՀՍՄԽ-ը թողարկել է ՖՀՍՄ 9-ը «Ֆինանսական գործիքներ» (2014թ.)՝ ներկայացնելով իր ծրագրի ավարտը, ինչը պետք է փոխարինի ՀՀՍՄ 39-ին «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: Նոր ստանդարտն ընդարձակ փոփոխություններ է ներկայացնում ՀՀՍՄ 39-ի ուղեցույցում ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վերաբերյալ և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման մոր «կանխատեսվող վարկային կորուստներ» մոդելը: ՖՀՍՄ 9-ը նաև ապահովում է մոր ուղեցույց՝ հեջի հաշվառման կիրառման վերաբերյալ:

Ընկերության դեկլարությունը դեռ պետք է գնահատի այս մոր ստանդարտի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը հասույթի ճանաչման նոր պահանջներ է ներկայացնում՝ փոխարինելով ՀՀՄՍ 18-ը «Հասույթ», ՀՀՄՍ 11-ը «Կառուցման պայմանագրեր» և հասույթի հետ կապված որոշ այլ մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հասույթի ճանաչման մոդել՝ հիմնված վերահսկողության վրա և լրացուցիչ ուղեցույց է տրամադրում գործող ՖՀՄՍ-ներում մանրամասնորեն չներկայացված տարբեր ոլորտների վերաբերյալ, ներառյալ՝ ինչպես հաշվառել բազմակի պարտավորությունների կատարման, փոփոխում գնագոյացմամբ, հաճախորդներին փոխհատուցման իրավունքների, մատակարարների՝ հետգնման տարբերակների պայմաններ և այլ բարդություններ պարունակող պայմանագրերը:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ում ներկայացված են վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ դրանց այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոփոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ», նույնպես

կիրառվի: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 16 (Փոփոխություններ) *«Հիմնական միջոցներ»* և ՀՀՄՍ 38 (Փոփոխություններ) *«Ոչ նյութական ակտիվներ»*: Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում

Փոփոխությունները պարզաբանում են ՀՀՄՍ 16-ում և ՀՀՄՍ 38-ում առկա սկզբունքները, համաձայն որոնց հասույթն արտացոլում է այն տնտեսական օգուտների մոդելը, որոնք առաջանում են գործառնական գործունեությունից (որի մասն է կազմում ակտիվը), այլ ոչ թե այն տնտեսական օգուտները, որոնք սպառվում են ակտիվի օգտագործման միջոցով: Արդյունքում, հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի ժամանակ չի կարող օգտագործվել հասույթի վրա հիմնված մեթոդը: Այն կարելի է օգտագործել միայն ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկի ժամանակ՝ խիստ սահմանափակ հանգամանքներում:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում առաջընթաց՝ 2016թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը: Չի ակնկալվում, որ սույն փոփոխություններն ազդեցություն կունենան Ընկերության վրա, հաշվի առնելով, որ Ընկերությունը չի օգտագործել հասույթի վրա հիմնված մեթոդ՝ իր ոչ ընթացիկ ակտիվների մաշվածությունը հաշվարկելու համար:

Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014թթ.

2012-2014թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Ընկերությանը վերաբերող փոփոխությունները ամփոփված են ստորև.

ՖՀՄՍ 7 *«Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ»*

Փոփոխությունները տրամադրում են հավելյալ ուղեցույց՝ օգնելու ընկերություններին բացահայտել այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում ծառայությունների պայմանագիրը համարվում է «շարունակական ներգրավվածություն»՝ ՖՀՄՍ 7-ի 42Ե-42Ը պարագրաֆների բացահայտման պահանջների կիրառման նպատակով: Նման հանգամանքները սովորաբար առաջանում են, երբ, օրինակ, ծառայությունների վճարը կախված է փոխանցված ֆինանսական ակտիվից հավաքագրված դրամական միջոցների հոսքերի չափից կամ ժամանակից, կամ երբ ֆիքսված վճարը ամբողջությամբ չի վճարվել այդ ակտիվի չիրականացման պատճառով:

Վերը ներկայացված 2012-2014թթ. տարեկան բարեփոխումները ուժի մեջ են մտնում 2016թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Դեկլարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.75 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 528.69 ՀՀ դրամ, իսկ ճապոնական իենը՝ 4.01 ՀՀ դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 474.97 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 577.47 ՀՀ դրամ, իսկ ճապոնական իենը՝ 3.97 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահություն կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահություն կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահություն կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահություն Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված շահություն ճանաչված վերագնահատումից աճն իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման

պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20-40 տարի
Փոխանցվող հարմարանքներ	- 5-40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	- 5-40 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5 տարի
Արտադրատնտեսական գույք	- 5-40 տարի
Այլ	- 2-10 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի ծրագրերի համար:

3.4 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ

Ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5 Ֆինանսական գործիքներ

ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների սկզբնական ճանաչման ժամանակ բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

i. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ ակտիվն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

ii. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է շահույթ կամ վնաս: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և շահույթում կամ վնասում ճանաչված վնասները չեն հակադարձվում շահույթում կամ վնասում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում ճանաչված պարտքային արժեքների արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են

շահույթում կամ վնասում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել արժեզրկումից վնասը շահույթում կամ վնասում ճանաչումից հետո:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

i. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.6 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետազայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներից այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով շահույթում կամ վնասում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլինի, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլինեի:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

3.7 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նումինալ արժեքը:

Վերագնահատման պահուստը ներառում է հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներն ու վնասները:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.8 Ընորհներ

Ընորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Ընորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Ընորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական

ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.11 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարը, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները.

- Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,
- Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ՝ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները:

Ընկերության հասույթն առաջանում է էլեկտրաէներգիայի ու բնական գազի վաճառքից և հզորության տրամադրումից, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և գազի փոխանակումից:

Էլեկտրաէներգիայի և գազի վաճառքից հասույթը ճանաչվում է ամսական հիմունքով փաստացի փոխանցված էլեկտրաէներգիայի հիման վրա:

Հգործության տրամադրումից հասույթը ստացվում է կայանի պարապուրդի ժամանակ և ճանաչվում է ամսական հիմքով՝ պարապուրդի ժամերի հիման վրա:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը գեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

Վարձակալական եկամուտ

Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Ապրանքների փոխանակում

Երբ ապրանքները փոխանակվում են նույն բնույթի և արժեքի ապրանքներով, այդպիսի փոխանակումը չի համարվում հասույթ առաջացնող գործարք:

Երբ ապրանքները վաճառվում են ոչ նմանատիպ ապրանքներով և ծառայություններով փոխանակելու միջոցով, փոխանակումը դիտվում է որպես հասույթ առաջացնող գործարք: Հասույթը չափվում է ստացված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով: Երբ ստացված ապրանքների իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, հասույթը չափվում է տրված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հոդ, շենքեր և շինություններ	Փոխանցող հարմարանք- ներ	Մեքենաներ և սարքավոր- ումներ	Տրանսպոր- տային միջոցներ	Արտադրա- տմոտեսական գույք	Ընդամենը
<i>Սկզբնական կամ գնահատված արժեք</i>						
2014թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացված)	28,228,903	8,027,868	126,564,123	278,728	1,696,443	164,796,065
Ավելացում	293,724	41,825	8,702,413	232,787	27,183	9,297,932
Օտարում	(702)	-	-	(46)	-	(748)
Ներքին շարժ	1,916	-	-	(162)	(1,754)	-
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	28,523,841	8,069,693	135,266,536	511,307	1,721,872	174,093,249
Ավելացում	12,104	93,587	46,221	14,998	15,273	182,183
Օտարում	703	(1,367)	(137,181)	(56,612)	(13,934)	(208,391)
Ներքին շարժ	17,664	12	(349)	4,259	(21,586)	-
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,554,312	8,161,925	135,175,227	473,952	1,701,625	174,067,041
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>						
2014թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացված)	1,612,474	1,405,290	27,110,807	57,876	172,243	30,358,690
Տարվա հաշվարկ	688,353	994,744	6,143,600	34,933	78,300	7,939,930
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(1,675)	-	(1,649)	(3,324)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	2,300,827	2,400,034	33,252,732	92,809	248,894	38,295,296
Տարվա հաշվարկ	707,058	1,014,056	6,297,470	84,900	76,256	8,179,740
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(943)	(101,600)	(2,831)	(9,857)	(115,231)
Ներքին շարժ	10,612	-	(100)	-	(10,512)	-
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,018,497	3,413,147	39,448,502	174,878	304,781	46,359,805
<i>Հաշվեկշռային արժեք</i>						
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,223,014	5,669,659	102,013,804	418,498	1,472,978	135,797,953
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,535,815	4,748,778	95,726,725	299,074	1,396,844	127,707,236

Հիմնական միջոցների մեջ ներառված է հին էլեկտրակայանը, որի հաշվեկշռային արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 13,994,297 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18,707,446 հազար դրամ): Այս էլեկտրակայանի շահագործումը դադարեցվել է նոր էլեկտրակայանի շահագործումից հետո, և այն պահվել է որպես պահուստային հզորություն:

Շահագործման մեջ լինելով ավելի քան 40 տարի՝ էլեկտրակայանի ագրեգատները և օժանդակ սարքավորումները ենթարկվել են ֆիզիկական և բարոյական էական մաշվածության՝ սպառելով իրենց աշխատանքային նորմատիվային ռեսուրսները, որի հետևանքով բնականաբար զգալիորեն ընկել է կայանի շահագործման հուսալիությունը և էլեկտրական ու ջերմային էներգիայի արտադրության արդյունավետությունը:

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, ՀՀ-ում էլեկտրաէներգիայի մատակարարման հզորությունը մեծացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել էր մի ծրագրի, որով կկառուցվեին բարձր արտադրողական, բարձր արդյունավետ, լրիվ ավտոմատ կառավարմամբ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայան 205 ՄՎտ անվանական հզորությամբ և 103 ԳԿալ/ժ ջերմության առաքմամբ: Շինարարական աշխատանքները սկսվել են 2006թ. սկզբին և ավարտվել են 2010թ. ապրիլին, երբ էլեկտրակայանը շահագործման է հանձնվել:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրակայանի հաշվեկշռային արժեքը 107,212,192 հազար դրամ է (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 110,224,274 հազար դրամ):

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով Ընկերությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 18,503,664 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 22,973,588 հազար դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ:

Ընկերության հիմնական միջոցները վերջին անգամ վերագնահատվել են անկախ գնահատողների կողմից 2012թ. դեկտեմբերի 21-ի դրությամբ: Գնահատումը կատարվել է՝ հիմնվելով շուկայում վերջերս իրականացված գործարքների վրա՝ «պարզեցված ձեռքի հեռավորության» պայմանով: Վերագնահատումից առաջացած աճը, հանած համապատասխան հետաձգված հարկերը, կրեդիտագրվել է վերագնահատման պահուստին՝ սեփական կապիտալում:

Եթե հիմնական միջոցները ներկայացված լինեին սկզբնական արժեքով, ապա հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքները համապատասխանաբար կկազմեին 113,098,244 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 116,168,536 հազար դրամ):

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառքի ինքնարժեք	3,439,128	3,251,277
Վարչական ծախսեր	72,664	35,994
Այլ ծախսեր	4,667,948	4,652,659
	<u>8,179,740</u>	<u>7,939,930</u>

5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2015թ.	2014թ. (վերաներկա- յացված)
Տարեսկզբի մնացորդ	382,987	(1,475,499)
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 21)	1,968,018	1,858,486
Տարեվերջի մնացորդ	<u>2,351,005</u>	<u>382,987</u>

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2015թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2015թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	3,271,404	942,171	4,213,575
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,017,924	15,689	1,033,613
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,249	(1,427)	4,822
	<u>4,295,577</u>	<u>956,433</u>	<u>5,252,010</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	3,912,590	(1,011,585)	2,901,005
	<u>3,912,590</u>	<u>(1,011,585)</u>	<u>2,901,005</u>
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	<u>382,987</u>	<u>1,968,018</u>	<u>2,351,005</u>

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2014թ. հունվարի 1	Շահույթուն կամ վնասուն ճանաչված	2014թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	2,424,842	846,562	3,271,404
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,017,924	-	1,017,924
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,370	(1,121)	6,249
	<u>3,450,136</u>	<u>845,441</u>	<u>4,295,577</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	4,925,635	(1,013,045)	3,912,590
	<u>4,925,635</u>	<u>(1,013,045)</u>	<u>3,912,590</u>
Ջուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	<u>(1,475,499)</u>	<u>1,858,486</u>	<u>382,987</u>
Ներառյալ՝		2015թ.	2014թ.
Փոխհատուցման ենթակա ավելի քան 12 ամսվա ընթացքում		3,357,768	1,389,782
Մարման ենթակա 12 ամսվա ընթացքում		(1,006,763)	(1,006,795)

6 Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	Համախառն արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
2015թ.			
Ներդրումներ արժեթղթերում	721,400	(721,400)	-
Տրամադրված փոխառություններ	25,457,881	(17,378,063)	8,079,818
Երկարաժամկետ դեբիտորական պարտքեր	386,792	(78,444)	308,348
	<u>26,566,073</u>	<u>(18,177,907)</u>	<u>8,388,166</u>
Հազար դրամ			Հաշվեկշռային արժեք (վերաներկա- յացված)
2014թ.	Համախառն արժեք	Արժեզրկման պահուստ	
Ներդրումներ արժեթղթերում	721,400	(721,400)	-
Տրամադրված փոխառություններ	19,730,123	(14,296,391)	5,433,732
Երկարաժամկետ դեբիտորական պարտքեր	329,892	-	329,892
	<u>20,781,415</u>	<u>(15,017,791)</u>	<u>5,763,624</u>

Ներդրումներ արժեթղթերում

Ներդրումներն արժեթղթերում ներկայացնում են «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ում 1.9% բաժնետոմսերի արժեքը:

Տրամադրված փոխառություններ

Տրամադրված փոխառությունները ներառում են «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ին և «Վանաձոր Զինարար» ՓԲԸ-ին տրամադրված գումարները՝ համաձայն Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության որոշումների: Փոխառություններն ունեն տարեկան 12% տոկոսադրույք: Համախառն արժեքը ներառում է մայր գումարը և

կուտակված տոկոսները: Ղեկավարությունը կարծում է, որ փոխառուների ֆինանսական խնդիրների պատճառով այս ակտիվների հավաքագրելիությունն անորոշ է, հետևաբար դրանց գծով ստեղծվել է արժեզրկման պահուստ: Այս փոխառությունները պայմանագրով ենթակա են մարման 12 ամսվա ընթացքում, սակայն, վերոնշյալ անորոշությունների պատճառով դրանք դասակարգվել են որպես ոչ ընթացիկ:

Պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2015թ.	2014թ.
Տարեսկզբի մնացորդ	15,017,791	12,124,208
Տարվա ընթացքում պահուստի աճ	3,160,116	2,893,583
Տարեվերջի մնացորդ	18,177,907	15,017,791

7 Պաշարներ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պահեստամասեր	4,601,188	4,640,543
Նյութեր	967,990	971,669
Շինարարական նյութեր	86,371	87,275
Այլ	117,557	102,314
	5,773,106	5,801,801

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա- յացված)
Առևտրային դեբիտորական պարտքեր	22,509,409	14,816,076
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(5,089,620)	(5,089,620)
Ջուտ առևտրային դեբիտորական պարտքեր	17,419,789	9,726,456
Տրված կանխավճարներ	218,303	728,516
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	7,017,221	4,076,164
Այլ	3,300	811
	24,658,613	14,531,947

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Վաճառքից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 96 օր (2014թ.՝ 55 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 365 օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 365 օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի:

Պետական բյուջեից դեբիտորական պարտքերը ներառում են 6,993,919 հազար դրամի ԱԱՀ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,065,519 հազար դրամ), որը կդառնա հաշվանցման ենթակա համապատասխան հաշիվ-ապրանքագրերի դիմաց վճարումը կատարելուց հետո:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5,089,620 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,089,620 հազար դրամ) ընդհանուր հաշվեկշռային արժեք ունեցող առանձին առևտրային դեբիտորական պարտքերն արժեզրկվել են, և դրանց համար ստեղծվել է պահուստ: Պահուստի գումարը կազմում է 5,089,620 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,089,620 հազար դրամ): Առանձին արժեզրկված առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում առաջացել են ջերմային էներգիայի վաճառքից «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ին և էլեկտրաէներգիայի վաճառքից «Արցախէներգո» ՓԲԸ-ին: Այս դեբիտորական պարտքերն առաջացել են ավելի քան մեկ տարի առաջ:

Այն դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները, որոնց պայմանները վերանայվել են և որոնք, հակառակ դեպքում, կլինեին ժամկետանց կամ արժեզրկված, կազմում են 12,242,589 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զրո): Դրանք վերաբերում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին:

Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2015թ.	2014թ.
Տարեսկզբի մնացորդ	5,089,620	5,089,620
Տարվա ընթացքում պահուստի աճ	-	-
Տարեվերջի մնացորդ	5,089,620	5,089,620

Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Դեկավարությունը հավատացած է, որ ստեղծված կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից զատ լրացուցիչ պահուստ չի պահանջվում:

Տե՛ս ծանոթագրություն 24՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

9 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	65	1,133
Բանկային հաշիվներ	3,099,791	803,059
	3,099,856	804,192

Տե՛ս ծանոթագրություն 24՝ դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

10 Կապիտալ և պահուստներ

10.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2015թ.	Սովորական բաժնետոմսեր 2014թ.
Հայտարարված բաժնետոմսեր		
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 5,300 դրամ	140,324	140,324
Թողարկված և տարվա ընթացքում ամբողջովին վճարված	2,021,867	-
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 5,300 դրամ	2,162,191	140,324

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

Տարվա ընթացքում Ընկերության բաժնետիրական կապիտալն ավելացել է 10,715,895 հազար դրամով լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման արդյունքում:

10.2 Պահուստային կապիտալ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և Ընկերության կանոնադրության՝ Ընկերության բաշխման ենթակա շահույթը սահմանափակվում է չբաշխված շահույթի մնացորդով, ինչպես գրանցված է Ընկերության՝ հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվություններում:

Համաձայն օրենսդրության՝ Ընկերությունը պետք է ստեղծի պահուստ իր կուտակված շահույթի հաշվին, որը հավասար կլինի բաժնետիրական կապիտալի առավելագույնը 15%-ին: Պահուստի նպատակն է ապագա կորուստների ծածկումը: Համաձայն Ընկերության կանոնադրության պահուստային կապիտալը պետք է կազմի բաժնետիրական կապիտալի 15%-ը:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստային կապիտալը կազմում է 1,718,942 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 111,557 հազար դրամ):

10.3 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված ակտիվի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը նույնպես վերագրվում է կուտակված շահույթին: Վերագնահատման պահուստը ներկայացված է համապատասխան շահութահարկից զուտ:

11 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապահովված վարկ Ֆինանսների նախարարությունից	3,471,113	7,977,941	99,299,676	101,564,848
Ապահովված բանկային վարկեր	5,704,748	5,046,143	-	2,369,956
Այլ փոխառություններ	4,743,763	10,558,174	-	-
	<u>13,919,624</u>	<u>23,582,258</u>	<u>99,299,676</u>	<u>103,934,804</u>

Բանկային վարկերն ունեն տարեկան 11.7% տոկոսադրույք (2014թ.՝ 11% տոկոսադրույք):

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, ՀՀ Էներգետիկայի և բնական
պաշարների նախարարությունը և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի
դեկավարությունը բնական գազի այրմամբ գերժամանակակից համակցված
շոգեգազային ցիկլով աշխատող նոր էներգաբլոկի կառուցման միջոցով ձեռնամուխ են
եղել Երևանի ՋԷԿ-ի վերակառուցման ծրագրի իրականացմանը: Այդ նպատակով
երկարատև բանակցություններից հետո և ծանրակշիռ հիմնավորումների ներկայացման
արդյունքում 2005թ. մարտի 29-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և
Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալություն (ՃՄՀԳ) միջև
ստորագրվել է վարկային պայմանագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով
էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Նշված
համաձայնագրի հիման վրա ՃՄՀԳ-ն ՀՀ կառավարությանը տրամադրել է զարգացման
պետական աջակցության (ՁՊԱ) վարկ արտոնյալ պայմաններով՝ 0.75 % տարեկան
տոկոսադրույքով և 40 տարի մարման (որից 10 տարին արտոնյալ) ժամկետով՝
հատկացնելով 24,409,000 միլիոն ճապոնական իեն: Համաձայնագիրը վավերացվել է ՀՀ
ազգային ժողովի կողմից 2005թ. հուլիսի 27-ին: 2005թ. մարտին ենթավարկային
պայմանագիր է կնքվել Ընկերության և Ֆինանսների նախարարության միջև՝ նույն
պայմաններով:

Այլ փոխառությունները ներառում են «Որոտան» ՀԷԿ-ից ստացված 4,536,621 հազար
դրամ անտոկոս փոխառությունները (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,075,610
հազար դրամ), որը փոխանցվել է Ընկերությանը՝ ցեսիայի պայմանագրի հիման վրա:

Վարկերի և փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային
արժեքին, քանի որ գեղչման ազդեցությունն էական չէ:

Վարկերն ու փոխառություններն ապահովված են հիմնական միջոցներով (տե՛ս
ծանոթագրություն 4):

Ընկերության տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն
տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 24-ում:

15 Հասույթ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Էլեկտրատեղակայի վաճառք	46,213,286	42,525,755
Հզորության տրամադրում	11,646,660	7,841,522
Բնական գազի վաճառք	10,750,260	14,042,692
	<u>68,610,206</u>	<u>64,409,969</u>

16 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված էլեկտրատեղակայի ինքնարժեք	11,018,950	13,004,070
Վաճառված գազի ինքնարժեք	9,587,863	13,764,500
Արտադրությունում օգտագործված գազի և այլ նյութերի ինքնարժեք	33,233,615	26,136,125
Էներգիայի և գազի տեղափոխման ծառայություններ	3,975,055	3,546,572
Մաշվածության ծախսեր	3,439,128	3,251,277
Փոխհատուցում աշխատակիցներին	652,652	743,086
	<u>61,907,263</u>	<u>60,445,630</u>

17 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցում աշխատակիցներին	262,636	263,081
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	75,444	37,149
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	35,137	35,014
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	39,197	27,972
Չփոխհատուցվող հարկեր և պարտավորություններ	107,265	309,592
Բանկային ծախսեր	59,058	90,084
Այլ	22,763	45,124
	<u>601,500</u>	<u>808,016</u>

18 Այլ ծախսեր

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Մաշվածություն	4,667,948	4,652,659
Գազի և էլեկտրաէներգիայի կորուստներ	907,558	951,705
Տուգանքներ և տույժեր	287,785	30,042
Հնարավոր շահութահարկի գծով պահուստ	518,527	-
Այլ	1,520,807	374,691
	<u>7,902,625</u>	<u>6,009,097</u>

Այլ ծախսերը ներառում են կարիքավոր ընտանիքների անունից բնական գազի օգտագործման դիմաց «Գազպորմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ Ընկերության կողմից վճարված գումարները, որոնք կազմում են 828,419 հազար դրամ՝ համաձայն ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 2015թ. փետրվարի 26-ին ընդունված թիվ 181-Ա որոշման:

19 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Փոխառությունների գծով տոկոսային եկամուտ	561,589	521,840
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	<u>561,589</u>	<u>521,840</u>
Ֆինանսների նախարարությունից փոխառությունների գծով տոկոսային ծախս	771,803	779,352
Բանկային փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	745,027	708,299
Այլ փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	91,316	48,343
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	<u>1,608,146</u>	<u>1,535,994</u>
Զուտ ֆինանսական ծախսեր	<u>(1,046,557)</u>	<u>(1,014,154)</u>

20 Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր	688,550	5,059,090
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	<u>(1,370,632)</u>	<u>(2,547,525)</u>
	<u>(682,082)</u>	<u>2,511,565</u>

21 Շահութահարկի գծով փոխհատուցում

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Ընթացիկ հարկ	964,065	360,026
Հետաձգված հարկ	(1,968,018)	(1,858,486)
	<u>(1,003,953)</u>	<u>(1,498,460)</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՀՀՄՍ)	(6,375,717)		(3,902,021)	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2014թ.՝ 20%) (Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	(1,275,143)	20.00	(780,404)	20.00
Շահութահարկի գծով փոխհատուցում	271,190	(4.25)	(718,056)	18.40
	<u>(1,003,953)</u>	<u>15.75</u>	<u>(1,498,460)</u>	<u>38.40</u>

22 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

22.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում՝ հիմք ընդունելով ակտիվների տնտեսական կյանքի վերաբերյալ իր գնահատականները: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Առևտրային դեբիտորական պարտքերի և ֆինանսական ակտիվների արժեզրկում

Արժեզրկումը գնահատելու համար Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է իր ֆինանսական ակտիվները: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արժեզրկված դեբիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը եղել է համապատասխանաբար զրո և 8,388,166 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ համապատասխանաբար զրո և 5,763,624 հազար դրամ): Ընկերությունը դատողություն է կիրառում, որպեսզի գնահատի արժեզրկումից ցանկացած կորստի գումարը այն դեպքերում, երբ հաճախորդը կամ փոխառուն ֆինանսական բարդություններ ունեն ապագա դրամական հոսքերը գնահատելիս: Եթե դեբիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների փաստացի փոխհատուցումը տարբերվի գնահատվածից, ապա այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կարող է տարբեր լինել:

23 Ֆինանսական գործիքներ

23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.5-ում:

23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր		
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	8,388,166	5,763,624
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17,423,089	9,727,267
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	3,099,856	804,192
	<u>28,911,111</u>	<u>16,295,083</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	113,219,300	127,517,062
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	41,824,669	25,696,534
	<u>155,043,969</u>	<u>153,213,596</u>

24 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության վաճառքներից, որոնք, արտահայտված են ԱՄՆ դոլարով, ինչպես նաև վարկերից և փոխառություններից, որոնք ի սկզբանե, արտահայտված են ճապոնական իենով, ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական դեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Իեն
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,459,024	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	11	887	-
	<u>1,459,035</u>	<u>887</u>	<u>-</u>
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	2,837,431	2,888,477	102,729,433
	<u>2,837,431</u>	<u>2,888,477</u>	<u>102,729,433</u>
Զուտ արդյունք	<u>(1,378,396)</u>	<u>(2,887,590)</u>	<u>(102,729,433)</u>

Հոդված

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Իեն
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	314	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	12,892	2,406	14
	13,206	2,406	14
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	1,681,394	5,714,509	109,542,789
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	27,509	-	-
	1,708,903	5,714,509	109,542,789
Զուտ արդյունք	(1,695,697)	(5,712,103)	(109,542,775)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգալունությունը՝ ճապոնական իենի, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2014թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2014թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգալունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2014թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ճապոնական իենի, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2014թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Իենի ազդեցություն	
	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.
Շահույթ կամ վնաս	137,840	169,570	288,759	571,210	10,272,943	10,954,278

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	8,388,166	5,763,624
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17,423,089	9,727,267
Մնացորդներ բանկերում	3,099,856	804,192
	<u>28,911,111</u>	<u>16,295,083</u>

Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից են: Այս դեբիտորական պարտքերի համար պարտքային ռիսկն ընդունելի է: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ժամկետանց դեբիտորական պարտքերի համար ստեղծվել է 5,089,620 հազար դրամ պահուստ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,089,620 հազար դրամ):

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները ներկայացնում են «Վանաձոր Քիմալոմ» ՓԲԸ-ին տրամադրած փոխառությունները: Այդ ընկերությունը 2016թ. սկզբին սնանկ է հայտարարվել: Դեկավարությունը ակնկալում է վերականգնել փոխառությունները երբ ընկերության ակտիվները վաճառվեն սնանկության գործընթացի ժամանակ:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2015թ.	Ամսական	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		0.72%	
Մինչև 6 ամիս	46,361,291	4,701,423	51,062,714
6 ամսից մինչև 1 տարի	-	4,941,145	4,941,145
1-5 տարի	-	17,382,300	17,382,300
Ավելի քան 5 տարի	-	81,657,810	81,657,810
	<u>46,361,291</u>	<u>108,682,678</u>	<u>155,043,969</u>

2014թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		0.78%	
Մինչև 6 ամիս	25,696,534	6,460,685	32,157,219
6 ամսից մինչև 1 տարի	971,000	7,444,430	8,415,430
1-5 տարի	8,104,610	20,356,249	28,460,859
Ավելի քան 5 տարի	-	84,180,088	84,180,088
	34,772,144	118,441,452	153,213,596

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1.5 ամսվա ընթացքում:

25 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են մնանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

25.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար քաջահայտված է իրական արժեքը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Իրական արժեքը որոշվում է՝ համապատասխան դրամական հոսքերը գեղջելով մմանատիպ գործիքների համար կիրառվող շուկայական տոկոսադրույքով: Այս դեպքում ամենագլխի փոփոխականը գեղջման տոկոսադրույքն է: Վերը նշված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

25.2 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ընկերության հիմնական միջոցները հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողի, շենքերի և այլ հիմնական միջոցների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում՝ հողի համար և 3-րդ մակարդակում՝ շենքերի և այլ ակտիվների համար: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր: Ջգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում: Հետագա տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Հող (2-րդ մակարդակ)

Գնահատումն իրականացվել է՝ օգտագործելով շուկայական մոտեցումը, որն արտացոլում է մմանատիպ գույքի համար վերջերս իրականացված շուկայական գործարքներում դիտարկված գները և միավորում է վերոհիշյալ հողին յուրահատուկ ցուցանիշների ճշգրտումները՝ ներառյալ հողամասի չափը, գտնվելու վայրը, սահմանափակումները և օգտագործման նպատակը:

Նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալը վերոհիշյալ հողին յուրահատուկ ցուցանիշների ճշգրտումն է: Այս ճշգրտման չափը և ուղղությունը կախված է մմանատիպ գույքի հետ կապված դիտելի շուկայական գործարքների քանակից և բնույթից, որոնք օգտագործվում են որպես գնահատման սկզբնական: Չմայած այս ելակետային տվյալը հիմնված է սուբյեկտիվ դատողության վրա, ղեկավարությունը ենթադրում է, որ ընդհանուր գնահատումը էական ազդեցություն չի կրի ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններից:

Շենքեր և շինություններ (3-րդ մակարդակ)

Շենքերի և շինությունների իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով փոխարինման մեթոդը:

Փոխարինման (ծախսային) մեթոդով շենքերի իրական արժեքը որոշվել է՝ հաշվի առնելով նմանատիպ շենքեր կառուցելու համար պահանջվող ծախսերը՝ հանելով հաշվարկված մաշվածությունը, որը ներառում է վերագնահատման օրվա դրությամբ ֆիզիկական, տնտեսական և ֆունկցիոնալ մաշվածքները:

Սարքավորումներ և այլ ակտիվներ (3-րդ մակարդակ)

Ընկերության սարքավորումների մեծ մասն իրենց բնույթով առանձնահատուկ են և հազվադեպ են վաճառվում բաց շուկայում, բացառությամբ որպես բիզնեսի մաս վաճառվող սարքավորումները: Նմանատիպ սարքավորումների շուկան Հայաստանի Հանրապետությունում ակտիվ չէ և չի ապահովում համեմատական սարքավորումների վաճառքի բավականաչափ քանակ՝ օգտագործելով շուկայական մոտեցում իրական արժեքը որոշելու համար: Հետևաբար, սարքավորումների իրական արժեքը սկզբնապես որոշվել է՝ օգտագործելով մաշված փոխարինման արժեքը:

26 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու չբաշխված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերն ու փոխառությունները, որոնք բացահայտված են ծանոթագրություն 11-ում:

Դեկլարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով, Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող բաժնեմասի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր, կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	10,668,306	5,324,175
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(3,099,856)	(804,192)
Կապիտալ	7,568,450	4,519,983
Ընդհանուր սեփական կապիտալ	10,668,306	5,324,175
Փոխառություններ	113,219,300	127,517,062
Ընդհանուր ֆինանսավորում	123,887,606	132,841,237
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.06	0.03

27 Պայմանականություններ

27.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

27.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկլարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

27.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Դեկլարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

28 Կապակցված կողմեր

Ընկերության 100% բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, հետևաբար Ընկերության կապակցված կողմեր են համարվում բոլոր պետական ձեռնարկությունները: Ընկերության կապակցված կողմերը ներառում է նաև հիմնական ղեկավար անձնակազմը:

28.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ի դեմս ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության:

28.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
<i>Բաժնետեր</i>		
Տոկոսային ծախսի հաշվեգրում	771,803	779,352
Հաշվեգրված տոկոսների մարում	5,819,891	-
Փոխառության մայր գումարի մարում	2,901,416	-
<i>Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ</i>		
Ծառայությունների մատուցում	794	757
Փոխառությունների տրամադրում	5,095,400	5,337,592
Ֆինանսական ակտիվների արժեզրկում	3,160,116	2,893,583
Տրամադրված փոխառությունների մարում	-	3,374,000
Ծառայությունների ձեռքբերում	1,388,046	1,154,986
Ստացված փոխառություններ	10,679,171	2,618,352
Ստացված փոխառությունների մարում	5,877,346	761,000
Տոկոսային եկամտի հաշվեգրում	561,589	521,840
Տոկոսային ծախսի հաշվեգրում	99,242	48,342
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Աշխատավարձ և այլ վարձատրություններ	6,374	6,360
Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ		
<i>Բաժնետեր</i>		
Վարկեր և փոխառություններ	102,729,433	109,542,789
<i>Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ</i>		
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	8,388,166	5,763,624
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,975	-
Վարկեր և փոխառություններ	4,693,521	10,553,962
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,713,596	3,634,031

29 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

2015թ. ընթացքում Ընկերությունը՝ նախորդ տարիներին վերաբերող սխալներ գտնելու հետևանքով, որոշել է վերաներկայացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները համաձայն ՀՀՄՍ8-ի. «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»: Վերոհիշյալի արդյունքում, Ընկերության ղեկավարությունը որոշել է համապատասխան ճշգրտումներ կատարել ֆինանսական հաշվետվություններում, որոնք կիրառվել են հետընթաց՝ հիմնվելով Ընկերության որդեգրած քաղաքականության (տե՛ս ծանոթագրություն 2.5):

Կատարված ճշգրտումները հիմնականում վերաբերում են հետևյալին՝

- նախորդ տարիների համար Ընկերությունը չի ձևակերպել վերագնահատման պահուստի օգտագործումը,
- նախորդ տարիներին կասկածելի դեբիտորական պարտքերի և տրամադրված ժամկետանց փոխառությունների համար պահուստ չի ստեղծվել,
- Ընկերության նախորդ տարվա գրանցումներում ներառված են եղել հիմնական միջոցների որոշ տարրեր՝ հիմնականում որոշ նախագծերի կապիտալացված ծախսումներ, որոնք սկսվել են տարիներ առաջ և անավարտ են մնացել: Հավանական չէ, որ այդ կապիտալացված ծախսումների արժեքը կփոխհատուցվի ապագա ժամանակաշրջաններում: Նախորդ տարիներին այդ ակտիվների համար արժեզրկում չի ճանաչվել,
- Ընկերության հաշիվներում հիմնական միջոցների վերագնահատման մասով ձևակերպված չեն եղել հետաձգված հարկեր,
- տարվա ընթացքում Ընկերությունը բացահայտել է, որ մատակարարներից մեկի մնացորդը սխալ է գրանցված եղել հաշվապահական գրքերում: Սխալը եկել է նախորդ տարիներից:

Ճշգրտումների ազդեցությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	138,668,225	(2,870,272)	135,797,953
Ոչ նյութական ակտիվներ	2,520	-	2,520
Հետաձգված հարկային ակտիվներ	-	382,987	382,987
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	21,790,749	(16,027,125)	5,763,624
	160,461,494		141,947,084
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	5,801,801	-	5,801,801
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19,951,458	(5,419,511)	14,531,947
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	804,192	-	804,192
	26,557,451		21,137,940
Ընդամենը ակտիվներ	187,018,945		163,085,024
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	743,717	-	743,717
Վերագնահատման պահուստ	24,339,232	(8,635,698)	15,703,534
Կուտակված շահույթ/(վնաս)	204,665	(11,327,741)	(11,123,076)
	25,287,614		5,324,175
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	122,112,688	(18,177,884)	103,934,804
Ակտիվներին վերաբերող շնորհներ	39,181	-	39,181
Հետաձգված հարկային պարտավորություններ	5,333,483	(5,333,483)	-
	127,485,352		103,973,985
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	5,384,247	18,198,011	23,582,258
Եկամուտներին վերաբերող շնորհներ	439,746	-	439,746
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	28,421,986	1,235,440	29,657,426
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	-	107,434	107,434
	34,245,979		53,786,864
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	187,018,945		163,085,024

Հազար դրամ

	2014թ. հունվարի 1-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	137,670,836	(3,233,461)	134,437,375
Ոչ նյութական ակտիվներ	4,816	-	4,816
Շահութահարկի գծով նվազագույն վճարներ	239,772	-	239,772
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	17,714,701	(12,124,208)	5,590,493
	155,630,125		140,272,456
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	5,050,890	-	5,050,890
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13,856,490	(5,089,620)	8,766,870
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	290,750	-	290,750
	19,198,130		14,108,510
Ընդամենը ակտիվներ	174,828,255		154,380,966
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	743,717	-	743,717
Վերագնահատման պահուստ	25,139,445	(5,413,733)	19,725,712
Կուտակված վնաս	(430,671)	(12,311,022)	(12,741,693)
	25,452,491		7,727,736
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	120,393,396	(28,512)	120,364,884
Ակտիվներին վերաբերող շնորհներ	40,187	-	40,187
Հետաձգված հարկային պարտավորություններ	5,540,906	(4,065,407)	1,475,499
	125,974,489		121,880,570
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	3,522,683	-	3,522,683
Եկամուտներին վերաբերող շնորհներ	453,247	-	453,247
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	19,425,345	1,371,385	20,796,730
	23,401,275		24,772,660
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	174,828,255		154,380,966

Չբաշխված շահույթի վրա ճշգրտումների ազդեցության մանրամասները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. հունվարի 1-ի դրությամբ
Ներդրումների արժեզրկում	(721,400)	(721,400)
Տրամադրված փոխառությունների արժեզրկում	(15,635,617)	(11,402,808)
Առևտրային դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(5,089,620)	(5,089,620)
Հիմնական միջոցների բարժեքի ճշտում	(2,003,125)	(2,003,125)
Հիմնական միջոցների արժեզրկում	(1,558,463)	(1,558,463)
Հիմնական միջոցների մաշվածություն	691,316	328,127
Հետաձգված հարկերի ճշտում	5,716,470	4,065,407
Վարկերի և փոխառությունների ճշտում	(20,127)	-
Կրեդիտորական պարտքերի մնացորդի ճշտում	(1,342,873)	(1,342,873)
Վերագնահատված պահուստի օգտագործում և համապատասխան հետաձգված հարկերի գրանցում	8,635,698	5,413,733
	<u>(11,327,741)</u>	<u>(12,311,022)</u>



Grant Thornton

www.grantthornton.am